ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԻ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՄԲԵԹԱՎՈՐ ՔԱՌԱԹԵՎ ԵՐԿՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Վ. Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Վաղ միջնադարի կենտրոնագմբեթ մեծ շինությունների հետ մեկտեղ մեզ հասել են նաև չորս տասնյակից ավելի փոքրածավալ, գմբեթավոր քառաթև հուշարձաններ, որոնք ըստ իրենց ներքին հատակագծային լուծման առանձնահատկությունների բաժանվում են երեք հիմնական խմբի՝ քառախորան, եռախորան և միախորան։ Միախորան (երեք ուղղանկյուն խաչաթևով) խմբին են պատկանում նաև քննարկվող հուշարձանները, որոնք հատակագծային համաչափություններով և կառուցվածքային որոշ տարրերի նմանությամբ առանձնանում են նշված խմբի մյուս շինություններից։ Ինչպես այս, այնպես էլ նույն ժամանակաշրջանում կառուցված լինելու հանգամանքը թույլ է տալիս տարածքով իրարից անջատ հուշարձանները ներկայացնել համատեղ։

Պատմական Հայաստանի Տաշիր վերին գավառի Արջովիտ[1] (այժմ Սպիտակի շրջանի Ղուրսալի) գյուղում է գտնվում քննվող հուշարձաններից առաջինը (նկ. 1), որի մասին առհասարակ ոչ մի տեղեկություն չունենք։ Ս. Ջալալյանցը միայն հիշատակում է, որ գյուղում կա «...հոյակապ եկեղեցի յանուն սրբոյն Գէորգեայ, կառուցեալ սրբստաղ քարամբք անդէն ավերակ...»[2]։ Իսկ Ն. Մ. Տոկարսկին հուշարձանների համեմատական աղյուսակում նշում է շինության հատակագծի և քիվի ձևերը[3]։

Հուշարձանը տեղադրվել է սարալանջին փռված գյուղի հյուսիս-արևմտյան կողմի համեմատաբար հարթ տեղում։ Այն կառուցվել է կարմիր, դարչնագույն, սև և դրանց տարբեր երանգների մաքուր տաշված տուֆից, որը հողմնահարվելով այժմ մուգ դարչնագույնի տպավորություն է թողնում։ Թե՛ ներսից և թե՛ դրսից պատերը շարված են համաչափ շարքերով (մոտ 0,60 մ բարձրությամբ), բացառությամբ բացվածքների, ուր քարերը ագուցված են միմյանց։ Պատերի հաստությունը 0,95—1 մ է։ Կրաբետոնի լիցքի մեջ օգտագործված են գետի մանր և միջին մեծության ավազահատիկներ։

Հուշարձանն այժմ 1—1,5 մ խորությամբ թաղված է հողի մեջ։ Պահպանվել է միայն հիմնական ծավալը՝ մինչև գմբեթակիր կամարները, այն էլ ոչ բավոր վիճակում։ Ներսում թափված է խորանի աջակողմյան, հարավային և արևմտյան դռների երկու կողմերի, հյուսիս-արևմտյան պատի երեսպատման քարերի մի մասը։ Չկան հարավային ճակատի լուսամուտի և դռան երեսպատման, արևմտյան դռան երկու կողմերի և լուսամուտների վերին երեսպատման քարերը։ Չորս խաչաթևերում էլ լուսամուտների առանցքով պա-

---

[1] Շնորհակալությամբ հայտնում ենք, որ գյուղի պատմական անվանը տեղեկացանք ակադեմիկոս Ս. Երեմյանից։

[2] Ս. Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, Տփղիս, 1853, էջ 103։

[3] Н. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, էջ 168։

տերը ճաքել են (հյուսիսային պատի ճաքին նպաստել է նաև լուսամուտի տակի բավական մեծ քանդվածքը), այնպես, որ թույլ երկրաշարժի դեպքում հուշարձանը կարող է լրիվ ավերվել։

Հատակագծային հորինվածքով Արջովիտի ս. Գևորգ եկեղեցին պատկանում է գմբեթավոր քառաթև փոքր կառույցների խմբին (նկ. 2)։ Գմբեթատակ քառակուսին երեք կողմից շրջապատված է ուղղանկյուն խաչաթևերով, իսկ արևելյան մասից՝ թեթևակի պայտաձև հատակագիծ ունեցող խորանով,



Նկ. 1. Արջովիտ գյուղի ս. Գևորգ եկեղեցու տեսքը հյուսիս-արևմուտքից։

որն արտաքինից նույնպես ներառված է ուղղանկյուն պատերի մեջ։ Խորանը ծածկված է գմբեթարդով, իսկ մնացած խաչաթևերը՝ բավական շեշտված պայտաձև թաղերով։ Այդ թաղերը երիզող զույգ պայտաձև կամարների վրա էլ բարձրացել է հուշարձանը պսակող գմբեթը։ Կամարների հատման տեղում, հատկապես հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան անկյուններում, գեռևս պահպանված տրոմպի ներքին քարերը վկայում են, որ քառակուսուց դեպի թմբուկ անցումը իրականացված է եղել տրոմպների միջոցով։ Հուշարձանը հիմնականում լուսավորվում է չորս խաչաթևերի կենտրոններում առկա լուսամուտներից։ Ուշագրավ լուծում ունեն արևելյան և հարավային խաչաթևերի մուտքերը։ Արևմտյան՝ հիմնական մուտքի լայն բացվածքը դրսից ունի հորիզոնական, մեկ ամբողջական քարից բարավոր, որի վրա հանգչում է պարզ տրամատներով շեշտված պայտաձև կամարը։ Մուտքը համանման լուծում ունի նաև ներսից։ Երկու կողմից էլ բարավորի և կամարի միջև քարեր են ագուցված, որոնցից արտաքինն այժմ թեքված է ներս և պարզորոշ երևում է, որ կամարի կողը հենց սկզբից սրբատաշ է եղել։ Այս հանգամանքը, ինչպես նաև կողի վրա պահպանված կարմիր ներկի հետքերը հիմք են

տալիս ենթադրելու, որ այդ քարերը (որոնց վրա կան եղծված արձանագրությունների հետքեր) հետագայում են ագուցվել, և գուցը նախկինում ունեցել է միջանցիկ կամարամահիկ (լյունետ), ինչպես Ավանի կաթողիկեն (VI դ.)։

Բայց, ի տարբերություն Ավանի և Երերույքի, այս հուշարձանի մուտքի պայտաձև կամարը դուրս չի գալիս պատի հարթությունից և չի հանգչում մուտքի երկու կողմերի որմնասյուների վրա։ Այս առումով Արջովիտի գուցն ավելի հնաձև է, որովհետև միայն IV—V դդ. սկսած մուտքի բարավորների շուրջ ստեղծվեցին մեկական կամ երկուական որմնասյուներ[4]։

Հետաքրքիր է լուծված նաև հարավային մուտքը։ Ներսում հորիզոնական բարավորի վրա նստած է նույնպես միակտոր հորիզոնական սալ, որի ներքին մասում, դռան բացվածքի չափով, 0,04—0,05 մ բարձրությամբ, փորված է բեռնաթափող ճեղք։ Այս երկու քարերին համապատասխանող արտաքին քարերը ընկած են, սակայն կրաբետոնի վրա պահպանված հետքերի շնորհիվ կարելի է նկատել, որ բարավորին համապատասխանել է նույնատիպ հորիզոնական սալ։ Սրա վերին շարքում, դռան ուղիղ կենտրոնում պահպանվել է մոտ 0,20 մ հաստություն ունեցող կիսաշրջանաձև կրաբետոնի շաղախ։ Դժվար չէ կռահել, որ ներքին՝ բեռնաթափող ճեղք ունեցող հորիզոնական սալին արտաքինից համապատասխանել է կիսաշրջանաձև, թերևս պայտաձև կամար, իսկ բարավորի և կամարի միջև քար է ագուցված եղել։ Եվ հենց այս կամարի ու քարի միջև կաղապարված կրաբետոնն է, որ կիսաշրջանաձև, որոշակի հաստությամբ պահպանվել է և այժմ պարզորոշ երևում է։ Մի խոսքով՝ արտաքուստ այս մուտքը լուծված է եղել ճիշտ արևմտյան դռան օրինակով, այն տարբերությամբ միայն, որ հենց սկզբից էլ միջանցիկ կամարամահիկ չի ունեցել։ Կառուցվածքային առումով արևմտյան և հարավային դռները նույնատիպ լուծում ունեն նաև ներսից։ Հարավային դռան բեռնաթափող ճեղքի շնորհիվ հորիզոնական սալը ծառայում է որպես կամար՝ սալի վրա իջնող ուղղահայաց բեռը փոխանցելու նրա ծայրերին։ Այս լուծումը նույնպես հին է (Լեռնակերտ IV դ., Երերույք V դ., Ավան VI դ.)։

Յուրահատուկ են լուծված նաև լուսամուտների բացվածքները։ Հորիզոնական կտրվածքում լուսամուտները դեպի ներս լայնանում են։ Ուղղահայացում՝ նրանց ներքին մասերը հորիզոնական են[5], իսկ վերին մասերը, շնորհիվ երկու տարբեր շառավիղ ունեցող կամարների, լայնանում են դեպի ներս (ընդ որում դեպի ներս նայող կամարի շառավիղը ավելի մեծ է)։

Հետաքրքիր է, որ բոլոր լուսամուտների վերին կամարաձև մասերը կիսաշրջանից փոքր են, այսինքն՝ կամարի կենտրոնը տեղադրված է նրա հիմքերը միացնող հորիզոնական գծից ներքև։

Ուշագրավ են հուշարձանի լուսամուտների պսակների լուծումները։ Արևմտյան և հյուսիսային պսակները համակենտրոն լինելով լուսամուտների վերին բացվածքներին, չեն ընդգծվում[6]։ Այլ կերպ է լուծված արևելյանը։ Այն վերին բացվածքի հետ ոչ թե համակենտրոն է, այլ լրիվ կիսաշրջան, որով,

---

4 «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», Երևան, 1964, էջ 97։

5 Միայն հյուսիսային լուսամուտն է դեպի ներս լայնանում և դժվար չէ նկատել, որ այն փորված է հետագայում ու շատ անփութորեն։

6 Հավանաբար, նման լուծում ունեցել է նաև հարավային պսակը, որն այժմ չի պահպանվել։

կարծես, ընդգծվում է խորանը լուսավորող լուսամուտի դերը հարթ ճակատի վրա։ Առանձնակի ուշադրության է արժանի պսակի և լուսամուտի միջև ընկած հատվածի մշակումը. մի բան, որ չենք հանդիպում վաղ միջնադարի հայկական ճարտարապետության և ոչ մի հուշարձանում։

Արևելյան պսակը պայտաձև կամարիկներով մշակված, ուղղանկյուն կրտրրվածքով հարթ սալ է։ Նրա աջակողմյան վերին մասում քանդակված է շրջանի մեջ ներգծված վեցթերթ վարդյակ՝ հար և նման Եղվարդի (V դ.) բազիլիկայի հարավային մուտքի բարավորի կենտրոնում զետեղվածին։ Արևմտյան լուսամուտի քանդակազարդ պսակը մեզ է հասել բավական վնասված, թեև տեղ-տեղ պահպանվել է նրա մակերեսով ձգվող պայտաձև կամարիկների և դրանք երիզող գնդիկների գոտին։ Հյուսիսային լուսամուտի պսակը ավելի պարզ է. այն ունի զույգ կիսագլանիկներից կազմված տրամատ՝ առանց զարդաքանդակների։ Հուշարձանի զարդատարրերից պահպանվել են նաև քիվի որոշ քարեր արևմտյան խաչաթևի հյուսիսային և հարավային անկյուններում։ Դրանք V—VII դդ. տարածված, ստորին մասում պարզ տրամատ ունեցող հարթ սալեր են՝ հարդարված այնքան շեշտված պայտաձև կամարիկներով, որ գրեթե շրջանագծեր են դառնում։

Հուշարձանի հարավային ճակատում, լուսամուտից աջ, պատի շարվածքի մեջ տեղադրված է 1,90×0,35 մ չափերով միակտոր քար։ Նրա կենտրոնում քանդակված է շրջանի մեջ ներգծված խաչ, որն առնված է ցածից դեպի վեր լայնացող «թևերի մեջ»։ Խաչի երկու կողմերում, շրջանի մեջ, փորագրված են վարդյակներ։ Դժվար չէ նկատել, որ այս զարդաքանդակները արվել են նախքան քարը պատի շարվածքի մեջ դնելը (աջակողմյան վարդյակի վերին մասը տաշված է)։ Այդ քարը իր գույնով, չափերով, զարդաքանդակներով և դրանց մշակման տեխնիկայով նման է արևմտյան դռան բարավորին։ Թերևս այդպիսի մի խաչ կամ սրբապատկեր էլ եղել է արևմտյան դռան բարավորի կենտրոնում, որն անհետացել է հետագայում արված ուղղանկյուն փորվածքի պատճառով։ Բարավորի վրա (աջում) կա շրջանի մեջ ներգծված վեցթերթ վարդյակ, իսկ ձախում՝ ռոմբաձև զարդաքանդակ։

Հարավային պատի մեջ տեղադրված քարի զարդաքանդակները հիշեցնում են Երերույքի հարավային դռան բարավորը, որը նույնպես ունի շրջանի մեջ ներգծված հավասարաթև խաչ՝ պարփակված ներքևից լայնացող թևերով։ Այս փաստը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ ինչպես արևմտյան բարավորը, այնպես էլ հարավային ճակատում շարվածքի մեջ տեղադրված քանդակազարդ քարը քրիստոնեական շրջանի առաջին դարերին պատկանող, նույն տեղում կամ շրջապատում եղած որևէ կառույցի քարերից են, որոնք, թեև վնասված, բայց օգտագործվել են Արջովիտի հուշարձանում։

Հայկական ճարտարապետության մեջ տակավին V դ. նշանակալից տեղ էր գրավում բազմերանգ տուֆաքարը[7]։ Որպես զարգամիջոց օգտագործվում էր նաև ներկը։ Վաղ շրջանի ճարտարապետական կառույցներում որոշ մանրամասներ ներկվում էին։ Այսպես, օրինակ, Երերույքում կարմիր և դեղին են ներկված հարավային սյունաշարի արևելյան, վերջին որմնասյան խոյակն ու

---

7 Տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 132։



Նկ. 2. Արշովիտ գյուղի ս. Գևորգ եկեղեցի. ա) արևմտյան ճակատը, բ) հատակագիծը, գ) ընդլայնական կտրվածքը, դ) լուսամուտների երեսակալները, ե) հարավային մուտքը ներսից, զ) պահունակ, է) հարավային ճակատի քանդակազարդ քարը։



Նկ. 3. Նոր Կյանք գյուղի եկեղեցու հյուսիսային ճակատը, ընդերկայնական կտրվածքը և հատակագիծը։

արևմտյան դռան կիսաշրջանը[8], Քասաղում՝ հարավային և արևմտյան դռների բարավորների ազատ մակերեսները[9]։ Կարմիր և դեղին է ներկված Արջովիտ գյուղի հուշարձանի արևելյան լուսամուտի պսակը, որի պայտաձև կամարիկների մեջ պարզորոշ երևում են ջնարակի նման փայլող դեղին ներկի մնացորդներ։ Ներկի հետքեր կան նաև արևմտյան լուսամուտի պսակի, դռան բարավորի և պայտաձև կամարի վրա։

Հետաքրքիր են մշակված հուշարձանի մանրամասները։ Սովորաբար դրմբեթակիր զույգ կամարների դեպքում գմբեթատակ քառակուսու պարզ անկյունները ստանում են լրացուցիչ ելուստներ, որոնց վրա էլ հանգչում են վերին կամարները։ Սակայն Արջովիտում վերջիններս այնքան նեղ են, որ եթե իջնեին մինչև իմպոստները, ապա գմբեթատակ քառակուսու անկյուններում ստացվող լրացուցիչ ելուստը կլիներ շատ աննշան և անտեղի։ Դրանից խուսափելու համար էլ երկրորդ կամարները հանգչում են իմպոստներից վեր տեղադրված պահունակների վրա, հիշեցնելով Մաստարայի և Ավանի լուծումները։ Արջովիտում դմբեթակիր կամարների իմպոստները որմնասյան հարթությունից դուրս են դրված, որը նույնպես բնորոշ է վաղ շրջանի հուշարձաններին (Ծերերույք, Աշտարակի Ծիրանավոր, Ավան)։

Այս ամենից հետո դժվար չէ նկատել, որ Արջովիտ գյուղի ս. Գևորգ եկեղեցին իր հատակագծային լուծման համաչափություններով, ճակատների և առանձին մանրամասների մշակումով առանձնահատուկ տեղ է գրավում նույնատիպ հուշարձանների շարքում։ Թաղերի պայտաձևությունը, մուտքերի և լուսամուտների ձևերն ու նրանց կառուցվածքային լուծումները, զարգանաշխ հարդարանքը, կառուցողական տեխնիկան և այլ մանրամասեր հատուկ են հայ դասական ճարտարապետության հուշարձաններին։ Եվ եթե նրմանությունը V դ. հուշարձանների հետ կարելի է բացատրել ավանդական տարրերի ընդօրինակմամբ, ապա բազմաթիվ հնատիպ ձևերի միաժամանակյա օգտագործումը բացառում է նման հնարավորությունը և թույլ է տալիս Արջովիտի ս. Գևորգ եկեղեցին թվագրել VI դ. կեսով։

Վաղ միջնադարի հայ ճարտարապետության մյուս արժեքավոր հուշարձանը գտնվում է Արթիկի շրջանի Նոր Կյանք գյուղում (նկ. 4)։ Մասնագիտական գրականության մեջ այն առաջին անգամ ներկայացրել է Թ. Թորամանյանը[10]։ Հուշարձանը համառոտ նկարագրվում է Հ. Ստրժիգովսկու[11] և Գ. Չուբինաշվիլու[12] աշխատություններում։ Նշված ուսումնասիրություններում շինությունը ներկայացված է առանց չափագրությունների։

XIX դարում եկեղեցական նոր շենքեր կառուցելիս օգտագործվում էին տակավին կանգուն փոքր խաչաձև եկեղեցիները՝ հավելելով երկթեք ծածկով. երկայնական երկշարք փայտյա սյուներով դահլիճներ[13]։ Այսպիսի մի (7,15×

---

8 Н. Марр, Ереруйская базилика, Ереван, 1968, էջ 12, 15։

9 Ա. Սահինյան, Քասաղի բազիլիկան, Երևան, 1955, էջ 78։

10 Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1942, հ. 1, էջ 246, հ. 2, էջ 137, 139, 203, 204։

11 J. Strzygowski, Die Baukunst Armenier und Europa, Wien, 1918, էջ 99։

12 Г. Чубинашвили, Разыскання по армянской архитектуре, Тбилиси, 1967, էջ 69։

13 Տե՛ս «Ակնարկ հայ ճարտարապետության պատմության», էջ 244։

0,55 մ. չափերի) ուղղանկյուն կառույց էլ կցվել է հիշյալ հուշարձանի արևմտյան խաչաթևին։ Դժվար չէ նկատել, որ դահլիճի կառուցման ժամանակ հուշարձանի գմբեթը թմբուկի հետ միասին չի պահպանվել, իսկ արևելյան և հարավային ճակատների վերին երեսպատման քարերի մեծ մասը թափված է եղել։ Հենց այս ժամանակ էլ գմբեթի փոխարեն, գմբեթակիր կամարների վրա, ուղղանկյուն կտրվածք ունեցող գերաններից փայտե ծածկ են դրել՝ ժողովրդական տներում լայն օգտագործում գտած հազարաշենի ձևով։ Իսկ արևելյան և հարավային ճակատների վերանորոգման հետ մեկտեղ, խաչաթևերի երկթեք ծածկերի փոխարեն, նրանց արտաքին եզրագծով, քիվերի վրա շարքեր են ավելացրել, այդպիսով գմբեթատակ քառակուսին խաչաթևերի հետ առնելով ընդհանուր ծածկի տակ[14]։

Հուշարձանը նոր ժամանակներում կրել է որոշ փոփոխություններ. քարե շարվածքով փակել են հյուսիսային մուտքը, իսկ արևմտյան գլխավոր մուտքը փոխարինել են խաչաթևերի ամբողջ լայնությամբ ձգվող կամարաձև բացվածքով։ Գլխավոր խորանում կառուցվել է բարձր բեմ՝ հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան պատերին հարող աստիճաններով։ Արևելյան և հարավային խաչաթևերի վրա բացվել են ոչ սրբատաշ կողերով լուսամուտներ։ Պարզ է, որ այս «անհարթությունը» պիտի վերացվեր սվաղով, որի հետքերը պատերի վրա այսօր էլ կան։ Այս փոփոխությունների թվին է պատկանում նաև այժմյան քարե սալահատակը։

Հատակագծային լուծմամբ այս կառույցը ևս պատկանում է գմբեթավոր քառաթև փոքր հուշարձանների խմբին (նկ. 3)։ Հորինվածքի հիմքը կազմող գմբեթատակ քառակուսին չորս կողմից շրջապատված է ուղղանկյուն խաչաթևերով, որոնք ներսում, բացի արևելյանից, ուղղանկյուն եզրագիծ ունեն և ավարտվում են պայտաձև թաղերով։ Արևելյան խորանը կիսաշրջանաձև հատակագիծ ունի և ավարտվում է գմբեթարդով։ Անցումը քառակուսուց դեպի թմբուկ իրականացված է միաշերտ գմբեթակիր կամարների անկյուններում տեղադրված առագաստների և նրանց մեջ փորված տրոմպների միջոցով։ Այս փոխանցման շնորհիվ, հենց գմբեթատակ կամարների վրա ստեղծվել է շրջանաձև այն հիմքը, որի վրա ժամանակին բարձրացել է ներսից գլանաձև թմբուկը։

Գմբեթատակ քառակուսու արտաքին անկյունները մնացել են ծածկի տակ, այդ պատճառով էլ հնարավորություն չունենք հավաստելու թմբուկի ձևը։ Գմբեթատակ քառակուսին, հավանաբար կրել է ութանիստ թմբուկ, ճիշտ այնպես, ինչպես Ներքին Թալինի ս. Քրիստափոր եկեղեցին (VII դ.), որի ներքին գլանաձև թմբուկը արտաքինից ութանիստ է։

Հուշարձանը նախկինում լուսավորվել է միայն արևմտյան և հարավային խաչաթևերի՝ դեպի ներս լայնացող լուսամուտներով։ Ունեցել է երկու մուտք՝ հյուսիսային և արևմտյան խաչաթևերին։

Շինության հիմնական ծավալը բարձրանում է երկաստիճան որմնախարիսխի վրա[15]։ Կարմիր, դարչնագույն, սև և դրանց տարբեր երանգների սըր-

---

14 Սակայն այդ ծածկը չի պահպանվել։ Այդ է վկայում Թ. Թորամանյանի լուսանկարը։ Ներկայիս ծածկը արված է մի քանի տասնամյակ առաջ տեղացիների կողմից՝ հուշարձանը իբրև պահեստ օգտագործելու նպատակով։

15 Արևելյան խաչաթևի միայն հյուսիսային անկյունում երևում է սրբատաշ տուֆի մի շարք։

բատաշ տուֆե պատերը, թե՛ ներսից և թե՛ դրսից արված են կանոնավոր շարքերով, որոնց հորիզոնական կարանների վրա պարզորոշ երևում են 45° խորությամբ փորված եզրակոսները։

Հուշարձանի զարդանախշերից քիչ բան է մնացել։ Չնայած հյուսիս-արևելյան անկյան քիվի քարերի առկայությանը, նրանց, ինչպես նաև հյուսիսային և արևմտյան լուսամուտների պսակների երբեմնի հարդարանքը չի պահպանվել։ Միայն հյուսիսային դռան բարավորի կամարի երեսակալի որոշ քարեր կրում են հարդարանքի հետքեր, որոնք ներքևից կիսագնդիկներով երիզված հարթ կամարիկներ են։ Պահպանված հարդարանքի մյուս նմուշը, նույն բարավորի կենտրոնում քանդակված, շրջանի մեջ առնված հավասարաթև խաչն է։

Հյուսիսային դռան երկու կողմերում, ինչպես նաև բարավորի և կամարի վրա կան մի քանի արձանագրություններ։ Կամարի արձանագրությունը թվագրված է ՆԾԲ (1003), իսկ դրանից աջ՝ ուռուցիկ տառերովը՝ ՆԺ (961)։ Արձանագրությունները հուշարձանի շինարարությանը չեն առնչվում, ուստի կառույցի թվագրումը հնարավոր է նույնատիպ, ինչպես և այլ հորինվածքի վաղ միջնադարյան կառույցների համագիր քննությամբ։

Թ. Թորամանյանը հուշարձանը դասել է VII դ. կառույցների շարքը[16]։ Այս թվագրումը ընդունվել է նաև Հ. Ստրժիգովսկու կողմից[17]։

Գ. Զուբինաշվիլին չի բաժանում այս կարծիքը[18]։ Սակայն հարցի առումով չափազանց արժեքավոր են Թ. Թորամանյանի 1913 թ. հունիսի 20-ի ճանապարհորդության ժամանակ արած դիտողությունները՝ նամակով ուղղված Ն. Մառին. «Ճանապարհին Հառիճեն 7—8 վերստ մնալով մտա Մաշիթլու բսված գյուղը, որտեղ կա մի հին եկեղեցի։ Այս եկեղեցին թեև բոլորովին նախնական վիճակի մեջ չէ մնացած, արևմտյան կողմե քանդվեր է և վրան հավելվածներ են արած, սակայն ըստ ինքյան մնացած մասերը ցույց կուտան, թե մինչև 7-րդ դար գոյություն ունեցող ոճին կպատկանին»[19]։

Հուշարձանն ի՞նչ աղերսներ ունի մինչև VII դ. գոյություն ունեցող ճարտարապետական ոճի հետ։ Դժվար չէ նկատել, որ հատակագծային հորինվածքով և առանձին մանրամասների լուծմամբ կառույցը զգալիորեն տար-

---

Որմնախարսխի հետ նույն հարթության մեջ գտնվող այդ շարքը արված է տեղանքի թեքության պատճառով։ Հ. Ստրժիգովսկին թերևս այս շարքն է նկատի ունեցել, որ որմնախարիսխը համարել է եռաստիճան։ Տե՛ս J. Strzygowski, նշվ. աշխ., էջ 99։

16 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 137, 246։

17 J. Sstrzygowski, նշվ. աշխ., էջ 99։

18 «Մի քանի այլ արձանագրությունների կողքին, հյուսիսային լուսամուտի աջ կողմում պահպանվել է Սարգիս կաթողիկոսի շինարարական արձանագրությունը,—գրում է նա,—469 թ. հայոց թվագրության, այսինքն, 1020 թվականին...»։ (Г. Чубинашвили, նշվ. աշխ., էջ 69)։ Վերը նկատեցինք, որ հուշարձանի արձանագրություններից և ոչ մեկը շինարարական չէ։ Դրանց մեջ կան նաև մինչև X դ. հասնող «զանազան նվիրատվությունների և հարկաբաշխման վկայություններ»։ (Տե՛ս Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 1, էջ 246, հ. 2, էջ 137։ Ուրեմն, ըստ Զուբինաշվիլու ստացվում է, որ դեռևս X դ. կանգուն և նվիրատվությունների արձանագրություն կրող եկեղեցին կառուցվել է XI դ. 20-ական թվականներին։ Տեղին է հիշատակել Հ. Ստրժիգովսկու այն կարծիքը, թե՝ «Կարմիր քարի վրա 1001 թ. և X դ. բազալտի վրա արված արձանագրությունները մատնանշում են կառույցի վաղ ժամանակաշրջանը» (տե՛ս նշվ. աշխ., էջ 99)։

19 Թ. Թորամանյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 203։ (Ընդգծումը մերն է)։

բերվում է Հայաստանի VII դ. գմբեթավոր քառաթև փոքր հուշարձաններից։ Հատակագծային լուծման և նույնիսկ չափերի առումով այն նման է միայն Արջովիտի ս. Գևորգ եկեղեցուն։ Եթե Արջովիտում գմբեթատակ քառակուսու չափերն են 4,05×4,00 մ, ապա Նոր Կյանքում՝ այն 4,20×4,23 մ է, ինտերյերում գլխավոր առանցքային չափերը Արջովիտում կազմում են 9,15×7,36 մ, Նոր Կյանքում՝ 9,45×7,50 մ։ Հյուսիսային և հարավային խաչաթևերի խո-

Նկ. 4. Նոր Կյանք գյուղի եկեղեցու տեսքը հյուսիս-արևելքից։

ությունը Արջովիտում՝ 1,62 մ է, Նոր Կյանքում՝ 1,64 մ։ Արջովիտի հետ այս հուշարձանի նմանությունը ի հայտ է գալիս և դռան կոնստրուկտիվ լուծմամբ։ Այստեղ դռան ուղղանկյուն բացվածքը ունի հորիզոնական բարավոր, որի վրա հանգչում է կիսաշրջանաձև կամարը։ Կամարի և բարավորի միջև, դեպի ներս 0,33 մ խորությամբ, քար է ագուցված։ Թվում է, որ հենց սկզբից էլ կամարամահիկը միջանցիկ չի եղել։ Ուշագրավ է, որ դռան կամարի երեսակալի միակ պահպանված հարդարանքը ևս նման է Արջովիտի արևմտյան լուսամուտի պսակի հարդարանքին։

Հուշարձանի կարևոր առանձնահատկություններից մեկն էլ արևելյան և հարավային խաչաթևերում լուսամուտների բացակայությունն է։ Լուսավորման հարցի նման լուծումը հաստատում է Նոր Կյանք գյուղի եկեղեցու սերտ առնչությունը վաղ միջնադարի պաշտամունքային կառույցների հետ։ Այսպես, արևելյան խորանում լուսամուտ չունի Ջարջառիսի հնագույն միանավ դահլիճը։ Լուսամուտներ չեն ունեցել (միայն հետագայում են բացվել) Արթիկի փոքր և Լմբատավանքի եկեղեցիները։ Հուշարձանի հյուսիսային կողմում դռան առկայությունը նույնպես բնորոշ չէ VII դ. գմբեթավոր քառաթև փոքր եկեղեցիներին։

Վաղ շրջանի կառույցների, օրինակ, Լեռնակերտի հետ Նոր Կյանքը առանձնանում է մի մանրամասով ևս։ Երկուսն էլ արևմտյան ճակատի դռան վերին մասում ունեն կոր վերջավորությամբ զույգ լուսամուտներ, այն տարբերությամբ միայն, որ Լեռնակերտի հուշարձանի լուսամուտի վերին մասը ուղղանկյուն է, իսկ Նոր Կյանքինը՝ կիսաշրջանաձև, երիզված քանդակազարդ պսակով։

Հուշարձանի ներսում հարավային պատի կենտրոնում շրջանագծային խորշ է արված։ Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ VI—VII դդ. մեզ հասած գմբեթավոր քառաթև փոքր կառույցներից և ոչ մեկը այսպիսի խորշ չի ունեցել։ Ներկայումս առկա փոքր խորշերը ավազանների հետ միասին, փորվել են միայն VII դ. հետո։ Մինչդեռ Նոր Կյանքում դրանք նախնական են։ Եվ հավանական է, որ հատակից սկսվող այդ խորշի ստորին մասում տեղադրված է եղել մկրտության ավազան (շարժական կամ անշարժ), որը սալահատակի վերականգնումից հետո չի պահպանվել։ Ուրեմն, արևելյան խաչաթևում, ուր տեղավորված է խորանը, կատարվել է հիմնական ծիսակատարությունը, իսկ հարավային խաչաթևում, խորշի մոտ՝ մկրտությունը։ Կարծում ենք, հենց այս հանգամանքով է պայմանավորված հուշարձանի հորինվածքում լուսամուտների և դռների ինքնատիպ տեղաբաշխումը։ Արարողության հետ կապված խաչաթևերը՝ արևելյան և հարավային, լուսամուտներ չունեն և լուսավորվում են միայն հանդիպակաց խաչաթևերի լուսամուտներից, ըստ որում՝ արևելյան խաչաթևի կարևորությունը շեշտված է զույգ լուսամուտներով։ Թերևս այս հանգամանքով պետք է բացատրել նաև հյուսիսային խաչաթևում դռան առկայությունը։

Այսպիսով, հնագույն շինությունների հետ հուշարձանի ճարտարապետական հորինվածքի սերտ առնչությունները (շեշտված պայտաձև թաղեր, եզրակոսներ, արևելյան և հարավային խաչաթևերում լուսամուտների բացակայություն, հյուսիսային դռան կոնստրուկտիվ լուծում, արևմտյան զույգ լուսամուտ) հիմք են տալիս Նոր Կյանքի հուշարձանը թվագրելու VI դ.։ Միաժամանակ կառույցում առկա տրոմպային ու առագաստային փոխանցումների զուգակցումը, որի ամենավաղ թվագրված օրինակը Ավանի տաճարն է (VI դ. վերջ), հնարավորություն է տալիս ավելի կոնկրետացնելու կառուցման ժամանակահատվածը և Նոր Կյանքի հուշարձանը թվագրելու VI դ. երկրորդ կեսով։

Ինչպես այս երկու, այնպես էլ նույն խմբին պատկանող մյուս հուշարձանները մասնագիտական գրականության մեջ անբավարար են ուսումնասիրված և բոլորն էլ թվագրված են VII դ.։

Սակայն Արջովիտի և Նոր Կյանքի հուշարձանները գալիս են հաստատելու, որ դեռևս VI դ., եթե ոչ ավելի վաղ, արդեն գոյություն ուներ գմբեթավոր քառաթև կառույցների այս տիպը։

Վաղ միջնադարի հայկական ճարտարապետության մեջ այս երկու հուշարձանները եզակի արժեք ունեն ոչ միայն դասական ճարտարապետության որոշ տարրերի պահպանման առումով, այլև ինքնատիպ մանրամասների մշակումով։

ДВА КРЕСТОВО-КУПОЛЬНЫХ ПАМЯТНИКА АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ РАННЕГО СРЕДНЕВЕКОВЬЯ

В. Г. ГРИГОРЯН

Резюме

Рассматриваемые в статье два памятника принадлежат к малым крестово-купольным сооружениям и своими архитектурными особенностями выделяются среди других сооружений данной группы.

Первый из них, церковь св. Геворга, находится в селе Арчовнт (ныне Курсали Спитакского района) провинции Ташир-верин исторической Армении. О памятнике нет исторических сведений и он до последнего времени не был изучен и представлен в специальной литературе. Плановым решением, отдельными деталями церковь занимает особое место среди дошедших до нас однотипных сооружений. Некоторые его элементы имеют прямые аналогии с памятниками армянской архитектуры раннего средневековья. Так, западный вход со сквозным люнетом напоминает вход храма в Аване, а конструктивное решение южного входа с разгрузочной щелью перекликается с памятниками Лернакерта (IV в.), Ереруйка (V в.), Авана (VI в.). Импосты подкупольных арок имеют свою аналогию в базиликах Ереруйка и Циранавора в Аштараке (V в.), расположенные же над ними кронштейны — в храмах Авана и Мастары (VI в.).

Архитектурные особенности, а также сравнительный анализ церкви Арчовита с памятниками Армении IV--VII вв. позволяют датировать ее первой половиной VI в.

Второй памятник находится в селе Нор Кянк Артикского района. Размерами, плановым решением и конструкцией северной двери он сходен с церковью в Арчовите. Одной из важных особенностей памятника является отсутствие окон на восточном и южном фасадах. Подобное решение вопроса освещения показывает тесные связи архитектуры церкви в с. Нор Кянк с культовыми сооружениями Армении V—VI вв. (Джарджарис, Малая церковь в Артике, Лмбатаванк). Наличием спаренных окон над западной дверью памятник имеет аналогию с однонефной базиликой в Лернакерте (IV—V вв.). Архитектурно-художественный анализ церкви Аствацацин села Нор Кянк позволяет датировать памятник VI в., а факт совместного применения тромповых и парусных переходов, самым ранним примером которого является храм Авана, дает возможность более уточненной датировки (вторая половина VI века). Следует отметить, что как эти два, так и все другие, принадлежащие к этой группе памятники, недостаточно исследованы в специальной литературе и все датированы VII веком. Но представленные нами памятники Арчовита и Нор Кянка приводят к выводу, что еще в VI в., если не ранее, уже существовал в Армении этот тип крестово-купольных сооружений.